ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАГАЦОТН МАРЗ
ГЮХАПЕТАРАН ЦАХКАОВИТ

Հեռ. 0257 62406
N 17/27-24
«12» «հունիսի» 2012թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 01.06.2012 թ. ավագանու հերթական նիստի թիվ 4 որոշումը:

ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Եկ.
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
«15» 06 2012թ.
Մուտք № 7/2711-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАГАЦОТН МАРЗ
ГЮХАПЕТАРАН ЦАХКАОВИТ

Հեռ. 0257 62406

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4.

## ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

01.06.2012 թ. գ. ԾԱՂԿԱՀՈՎԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳ ԱՆԴԱՄՆԵՐ.

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ՎԱՐԴԳԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ
2. ՍԱՐԳԻՍ ԳԻՐԳՈՐՅԱՆ
3. ԵՐՎԱՆԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ
4. ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ
5. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՕՐԱԿԱՐԳ.*

13. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
14. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
15. ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
16. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆՈՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:
17. ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ-5. դեմ-0. ձեռնպահ-0

### ԼՍԵՑԻՆ–13. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ՀՀ „ Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ծաղկահովիտի համայնքային ենթակայության „Սալած աղբյուր" կոչվող արոտավայրերից ժամանակավոր օգտվելու համար 85 հա արոտավայր 1հա կադաստրային արժեքի 5100/հինգ հազար հարյուր դրամ/ 30 տոկոսի չափով 1530 /մեկ հազար հինգ հարյուր երեսուն /դրամ

արժեքով 130000 /մեկ հարյուր երեսուն հազար/ դրամ ընդհանուր վարձավճարով մինչև արոտային սեզոնի ավարտը հատկացնել Արմավիրի մարզի Տանձուտ գյուղի բնակիչ Լևոն Միրզոյանին անասունների արածեցման նպատակով:

### ԼՍԵՑԻՆ - 14. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ`

Ծաղկահովիտի համայնքային ենթակայության ,,Վարդաբլուրի սար" կոչվող արոտավայրերից ժամանակավոր օգտվելու համար102հա արոտավայր 1հա-ի կադաստրային արժեքի 5100/հինգ հազար հարյուր դրամ/ 30 տոկոսի չափով 1530/մեկ հազար հինգ հարյուր երեսուն /դրամ արժեքով 156000 /մեկ հարյուր հիսուն վեց հազար/ դրամ ընդհանուր վարձավճարով մինչև արոտային սեզոնի ավարտը հատկացնել Ռյա-Թազա գյուղի բնակիչ Դալո Յոլչիի Հսոյանին անասունների արածեցման նպատակով:

### ԼՍԵՑԻՆ - 15 ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ջրամատակարարման ցանցի վերանորոգման անհրաժեշտությունից ելնելով`

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ`

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի «Ջրամատակարարում ծրագրի» 5113 հոդվածից կատարելու 120000/ մեկ հարյուր քսան հազար/դրամի չափով ծախս:
2. Հանձնարարել գլխավոր հաշվապահ Անահիտ Մելքոնյանին կատարելու համապատասխան ձևակերպումներ:

### ԼՍԵՑԻՆ – 16. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀօրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1,2,5 ենթակետով:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Արտագածոտնն մարզի Ծաղկաովիտ համայնքի ներքոհիշյալ անհատ ձեռներեցներին թույլատրել համայնքի տարածքում գտնվող իրենց պատկանող խանութների ներսում կատարելու ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառք, մեկ տարվա ժամկետով 01.06.2012թ. - 01.06.2013թ.

1. ԱՁ - Արամ Ներսիսյան
2. ԱՁ - Էդգար Սարգսյան
3. ,,Հեղան" ՍՊԸ - Արթուր Միքայելյան
4. ԱՁ – Սոնիկ Բեսալյան
5. ԱՁ – Վանիկ Ներսիսյան
6. ԱՁ - Ֆրիդա Ղազարյան
7. ԱՁ – Մարինե Սարիբեկյան
8. ԱՁ – Սառա Պետրոսյան
9. ԱՁ – Վարազդատ Գրիգորյան
10. ԱՁ – Սուսաննա Դանիելյան

Վերոհիշյալ անհատ ձեռներեցների համար սահմանել տեղական տուրք՝ տարեկան վճարը 24000/քսան չորս հազար / դրամ:

2. Շինանյութերի և տնտեսական ապրանքների առևտուր կազմակերպելու համար ԱՁ Յուրա Մալխասյանին տալ թույլտվություն և սահմանել տեղական տուրք մեկ տարվա համար 50000/հիսուն հազար/դրամ:

ԼՍԵՑԻՆ – 17. ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ ՀՀ ,,ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ" ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 20-ՐԴ ԿԵՏԻ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Արագածի հրշեջ-

փրկարարական ջոկատի համար նոր շենք կառուցելու նպատակով համայնքային սեփականություն համարվող 0,3094 հա բնակավայրի այլ հողամասը /ծածկագիր 0008-0001/ անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Տարածաշրջանի ազգաբնակչության կյանքի և առողջության ինչպես նաև պահպանումն արդյունավետ իրականացնելու նպատակով:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ՎԱՐԴԳԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ
2. ՍԱՐԳԻՍ ԳԻՐԳՈՐՅԱՆ
3. ԵՐՎԱՆԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ
4. ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ
5. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Լ. ՀԱԿՈԲՅԱՆ